Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2024 թ. գիտական հետազոտությունների և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. **ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի 2024 թ. գործունեության կարևորագույն արդյունքներից են՝ «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3»** գիտական թեմայի /ղեկ.՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/ շրջանակներում՝

ա. Շարունակվեցին պեղումները Ջրաձորի բրոնզ-երկաթեդարյան ամրոց-բնակավայրի տարածքում: Հիմնական աշխատանքները կենտրոնացվեցին ամրոցակիր բլրի գագաթամերձ հատվածում: 11x11 մ չափերի պեղավայրում բացվեց 8.20x8.30 մ չափերով հյուսիս կողմնորոշված շինություն՝ դրված բլրի հիմնաժայռի վրա: Կառույցի մուտքն հարավից է: Պատերից տեղ-տեղ պահպանվել են 1-4 շարք: Տուֆից, երբեմն բազալտից քարերը դրված են մշակված, հարթեցված հիմնաժայռի վրա: Հարավային հատվածում՝ մուտքի մոտ, հիմնաժայռը մշակված է որպես ցոկոլ: Կառույցի վրա կուտակված հողալիցքից գտնվեցին վերջինիս պատկանող բեկորներ, ինչպես նաև խաչապատկերով քար, բարավորի քար և այլ իրեր: Պեղված նյութը թույլ է տալիս ենթադրելու, որ կառույցը միջնադարում վերաօգտագործվել է: Պեղվող քառանկյուն կառույցն ունի 5.5x5.5 մ չափերի ներսույթ և շինտեխնիկայով մերձենում է Ուրարտուի կրոնապաշտամունքային շինությունների կառուցվածքին: Նմանատիպ քառանկյուն շինություններ հայտնի են Հայաստանի ուրարտական հուշարձաններում (Արին Բերդ, Կարմիր Բլուր, Արգիշթիխինիլի): Դրանք ուրարտական գրավոր աղբյուրներում հայտնի են ***susi*** անունով և նվիրված են եղել ուրարտական պանթեոնի գլխավոր աստծուն՝ Խալդին: Պեղավայրում թափված քարերից մաքրվեց նաև կոնաձև բլրի գագաթն օղակող պարսպապատի արևմտյան հատվածը: Բացվեց դեպի գագաթ տանող մուտք՝ հեծաններով և կիսաբոլորաձև հիմքով աշտարակներով: Ըստ երևույթին, պարիսպը կառուցվել է երկաթի դարում, ապա պարբերաբար ձևափոխությունների ենթարկվել միջնադարում:

բ. ՈՒսումնասիրվեց Էրեբունիի հիմնադրման առթիվ Արգիշտի Ա-ի թողած արձանագրության մեջ հիշատակվող «լուլուական ցեղեր» եզրույթը: Հատուկ անունների ստուգաբանությամբ պարզվեց, որ Արգիշտին այդ կերպ է կոչում ներկայիս ՀՀ տարածքի Արարատյան դաշտից մինչև Աղստևի հովիտն ընկած շրջանների բնակիչներին, և որ «Լուլու»-ն բարբարոսին բնութագրող արհամարհական ձև է: Իր արձանագրությամբ արքան ցույց է տալիս ձկնորսություն-ձկնաբուծության և ձկնամարդու պաշտամունքի հետամնացությունը ՈՒրարտուի ավելի զարգացած տնտեսվարման ձևի՝ հողագործության և մարդակերպ աստվածների պաշտամունքի համեմատ:

գ. Անհատ աշուղների ստեղծագործությունների ոճական, տիպաբանական և տեղային որոշակի առանձնահատկությունների խորքային և ընդհանրական վերլուծությամբ շարունակվեց հայ աշուղական նշանավոր կենտրոնների գործունեության և ժառանգության համակողմանի ուսումնասիրությունը: Ալեքսանդրապոլի օրինակով ներկայացվեցին հայ աշուղական արվեստում **համքարային ավանդույթի** կազմավորման պատմական նախադրյալները: Ելնելով ավանդույթների ժառանգականության և փոխակերպումների համագոյակցության համատեքստից դիտարկվեցին դրանց պատմամշակութային հիմքերը միջնադարյան գուսանական արվեստում:

2. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները 2024թ.

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը 2024թ. շարունակել է իրականացնել «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3» գիտահետազոտական ծրագիրը /ղեկ.՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/:

Հնագիտության գծով – նոր հուշարձանների հայտնաբերման, թվայնացման, վերգետնյա նյութի հավաքագրման, ինչպես նաև նախկինում բացահայտված հուշարձանների մոնիթորինգ անցկացնելու նպատակով հնագիտական հետախուզական աշխատանքներ են կատարվել Շիրակի մարզի Աշոցքի և Ամասիայի շրջանում՝ Ախուրյանի վերին հոսանքի շրջանում, Արփա լճի ավազանում, Աչքասարի հարավային, արևմտյան և հարավարևելյան լանջերին, Բավրայի դաշտում և Հարթաշեն-Տաշիր ավտոճանապարհի եզերքով: Հետախուզության արդունքում ճշտվել, լուսանկարվել և հաշվառվել են ինչպես հայտնի հուշարձանները, այնպես էլ հայտնաբերվել են նորերը՝ դամբարանաբլուրներ ու քարայրներ Հարթաշեն, Ջրաձոր, Հողմիկ և Կապս համայնքների վարչական տարածքներում: Զուգահեռ շարունակվել է Աշոցքի սարահարթի ամրաշինական համակարգի ուսումնասիրությունը: Թվայնացվել և մոդելավորվել են շուրջ երկու տասնյակ ամրոցներ:

Պատմագիտության գծով - հատուկ անունների ստուգաբանությամբ ապացուցվել է, որ ասորեստանյան սեպագրերում հիշատակվող Դայաենի (Դիաուխի) երկրանունն ունի հնդեվրոպական-հայկական ծագում: Հայկական ծագում ունեն նաև Դայաենիի գահակալների՝ ***Սիենի*** և ***Ասիա*** անունները: Sieni-ն արտացոլում է կաղամախի, իսկ Asia-ն՝ հացենի ծառի պաշտամունքը: Սրանք ըմբռնվել են իբրև «ծառ»-«Կենաց ծառ»-«թագավոր» առասպելաբանական կապի առարկայական դրսևորումներ: Շարունակվել է պատմական Տայք նահանգի պատմաժողովրդագրական քննությունը: Անդրադարձ է կատարվել երկրամասի հայ կաթոլիկ բնակավայրերի XVI-XIX դ. պատմությանը: Շարունակվել է աշխատանքը Ալեքսանդրապոլի գավառի XIX դ. երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության ուղղությամբ: Ալեքսանդրապոլի գավառի կրթամշակութային կյանքի քննության շրջանակներում անդրադարձ է կատարվել Ա. Ափրիկյանի և Պ. Բեբուրյանի գրական գործունեությանը: Առանձին ուսումնասիրության առարկա են դարձել 1920 թ. Օլթիի կռիվները, որոնք բնութագրվել են իբրև 1920 թ. թուրք-հայկական պատերազմի սկիզբ:

Ազգագրության գծով – ներկայացվել են կանանց ավանդական ու նոր մասնագիտությունները XXդ. առաջին կեսի Լենինականում, դրանց փոխկապակցությունն ու հարաբերակցությունը, վեր է հանվել ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության մեջ կանանց մասնակցության աստիճանը, պարզաբանվել են նրանց մասնագիտական խմբերի ու ենթախմբերի սոցիալ-վարքագծային հիմնական դրսևորումներն ու մասնագիտական ինքնության երևույթները: Շարունակվել է Շիրակի բանավոր ժառանգության վերլուծությունը: Առանձնացվել են Գյումրու վիպական, քնարական և ասույթային բանահյուսության նմուշները: Անդրադարձ է կատարվել բանահյուսական այն ժանրերին, որոնք ակտիվ կենցաղավարում են Գյումրիում: Շարունակվել է Շիրակի մարզի բնակչության ծերացման միտումների քննությունը: Լուսաբանվել են վերջին 33 տարիների ընթացքում մարզում գրանցված կենսաթոշակային տարիքի բնակչության բացարձակ և հարաբերական թվի շեշտակի աճի հետևանքները:

Բանագիտության գծով – եռաշերտ՝ բանահյուսություն-աշուղական երգ-գրական օրորերգ մոտեցմամբ շարունակվել է Շիրակի օրորերգերի և խաղիկների քննությունը: Առանձին քննության առարկա են դարձել նաև մանկական բանահյուսական տեքստե-

ում հանդիպող երդումները: Դրանք դիտարկվել են որպես տեքստի ուրույն տեսակ և քննվել հավատալիքային բանահյուսության համատեքստում:

Արվեստագիտության գծով – Շարունակվել է Շիրակյան ողբերգի և օրորի ժանրերի տիպաբանական և ոճական առանձնահատկությունների քննությունը: Հավաքված նյութի հորինվածքային, կառուցվածքային և արտահայտչական յուրահատկությունների բացահայտման նպատակով կատարվել են աղբյուրագիտական, բանագիտական և երաժշտատեսական աշխատանքներ: Ճարտարապետական համապարփակ վերլուծության են ենթարկվել Անի-Շիրակի և Տայք-Գուգարքի միջնադարյան հայկական ճարտարապետական դպրոցները՝ Անիի կաթողիկե և Տայքի Օշկվանքի գլխավոր եկեղեցիների որմնաշարերի համատեքստում: Դրանք թելադրող են իրենց ճարտարապետական դպրոցների կայացման մեջ և հսկայական ազդեցություն են թողել հայկական ավանդական որմնաշարի զարգացման վրա:

2024-ին Կենտրոնում իրականացվող ծրագրի շրջանակներում հրատարակվել են «Տայք. Պատմաճարտարապետական ուսումնասիրություն: Մաս Բ (Արսյացփոր)» (208 էջ), «Օրորոցային երգերը Շիրակի ավանդական երաժշտության արդի դրսևորումներում» (189 էջ), «Համքարային ավանդույթը հայ աշուղական արվեստում» (186 էջ), և «Շիրակի տղաբերք և մանկատածություն» (222 էջ) խորագրերով մենագրությունները, «Գիտական աշխատություններ» պարբերականի 27-րդ հատորի 1-ին (224 էջ) և 2-րդ (230 էջ) պրակները, «Տայքը պատմության խաչուղիներում» (286 էջ), «Հայագիտական ընթերցումներ» պարբերականի 1-ին (143 էջ) և 2-րդ պրակները (226 էջ), «Հայ ավանդական երաժշտության խնդիրներ» (168 էջ) հոդվածների ժողովածուները, 59 գիտական հոդվածներ (13-ը՝ արտերկրում) և գիտաժողովների 47 զեկուցումներ (11-ը՝ արտերկրում): Իրականացվել են՝ «Ազգագրական-բանագիտական ընթերցումներ» հանրապետական 4-րդ (14 մասնակից) և «Ափինյանական ընթերցումներ. Ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրները» հանրապետական 4-րդ գիտաժողովները (20 մասնակից), 4 հնավայրերի պեղումներ, ազգագրական 12 գիտարշավներ և 25 սեմինարներ: Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ սեպտեմբերի 28-30-ին կազմակերպվել է «Պատմական Տայքը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ)» խորագրով միջազգային գիտաժողովը (30 մասնակից, 4-ը՝ արտերկրից), հուլիսի 1-8-ին՝ «Երիտասարդ հնագետների երկրորդ միջազգային ամառային դպրոցը» (12 մասնակից, 6-ը՝ արտերկրից), հուլիսի 15-21-ին՝ «Շիրակի ճարտարապետությունը հնագույն շրջանից մեր օրերը» ամառային դպրոցը (18 մասնակից): Կենտրոնի գիտական, գիտակազմակերպչական և հրատարակչական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությամբ հաշվետու տարում գործել են ֆեյսբուքյան էջը, համացանցում տեղադրված Կենտրոնի եռալեզու կայք-էջը /www.shirakcenter.sci.am/ և ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ» պարբերականի երկլեզվյա կայք-էջը /www.shirakscіworks.sci.am/:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ **պ.գ.թ. Ա. Հայրապետյան**

Գիտքարտուղար՝ **պ.գ.թ. Ա. Ակոպով**

3. **Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները 2024թ**.

Հաշվետու տարում ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի **«Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային** (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական թեմաների մրցույթի արդյունքներով կենտրոնում իրականացվել են երկու թեմաներ՝ **ա.** ***«Տայքը IX-XI դարերում (պատմաճարտարապետական ուսումնասիրություն)»*** **և բ.** ***«Հայ աշուղական արվեստը պատմաքննական լույսի տակ»***:

«Շիրակի մանկական բանահյուսությունը» խորագրով ևս մեկ թեմա էլ իրականացվել է 2022թ. հոկտեմբերից՝ **«Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2022»** ծրագրի շրջանակներում:

ա. ***«Տայքը IX-XI դարերում (պատմաճարտարապետական ուսումնասիրություն)»*** **(**ղեկ.՝ պ.գ.թ. Ա. Ակոպով**)** թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի կատարման ամփոփիչ տարում կազմակերպվել է գիտական արշավախումբ Թուրքիայի հանրապետության տարածքում, փաստագրվել, լուսանկարվել և պատմաճարտարապետական քննության են ենթարկվել առաքելական, քաղկեդոնիկ և կաթոլիկ հայերի ստեղծած հայտնի, քիչ հայտնի և անհայտ 100-ից ավել պատմամշակութային հուշարձաններ՝ բերդեր, ամրոցներ, եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, կամուրջներ, աղբյուրներ, վիմագիր հուշարձաններ, քաղաքացիական նշանակության շինություններ և այլն: Թեմայի շրջանակներում մասնակիցների կողմից 2024 թ. կազմակերպվել և անց է կացվել «Պատմական Տայքը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ)» խորագրով միջազգային գիտաժողով (28-30.09.2024թ.): Կատարված աշխատանքներն ամփոփվել են գիտական 5 հոդվածներով (այդ թվում մեկը՝ SJR Q1 quartile-ում ընդգրկված **«Proceedings in Archaeology and History of Ancient and Medieval Black Sea Region»** ժողովածուի 16-րդ հատորում), միջազգային գիտաժողովների 4 զեկուցմամբ, հոդվածների **1** ժողովածուով, **1** կոլեկտիվ մենագրությամբ **«ՏԱՅՔ. Պատմաճարտարապետական ուսումնասիրություն: Մաս Բ (Արսյացփոր)»** և գիտական 3 սեմինարներով:

բ. ***«Հայ աշուղական արվեստը պատմաքննական լույսի տակ»*** **(**ղեկ.՝ արվեստագիտ.թ. Հ. Հարությունյան**)** թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակներում հաշվետու տարում թեմայի հիմնական արդյունքները ամփոփվել են երկու մենագրություններով՝ ***«Համքարային ավանդույթը հայ աշուղական արվեստում» և «Օրորոցային երգերը Շիրակի ավանդական երաժշտության արդի դրսևորումներում»*** միջազգային գիտաժողովներում 10 զեկույցներով և գիտական 6 սեմինարներով: Հրատարակվել է 14 հոդված ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում հրատարակվող գիտական տարբեր պարբերականներում: Եվս երկու հոդված հանձնված է հրատարակության՝ ***Հայ աշուղական նշանավոր կենտրոնները*** (“Folk life-journal of ethnological studies” SJR Q1) և ***Հայ աշուղական արվեստի պրոֆեսիոնալ բնորոշիչները*** (“Journal of folklore research” SJR Q2): Իբրև գիտական նորույթ դիտարկվել է հատկապես զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում Գուսանական եղբայրությունների գործունեությունը, որն էլ հետագայում փոխակերպվել է աշուղական համքարության կամ էսնաֆության:

գ. ***«Շիրակի մանկական բանահյուսությունը»*** (ղեկ. բան. գիտ. թեկն. Հ. Մատիկյան) թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի կատարման ամփոփիչ տարում ծրագրի ղեկավար Հ. Մատիկյանը հուլիսի 18-ից օգոստոսի 5-ը գործուղվել է ԱՄՆ (Նահանգ՝ Վիսկոնզին, ք.՝ Միլվոքի) ծրագրի արտասահմանյան գործընկեր պրոֆեսոր Ս. Բրոն-

ների հետ համատեղ աշխատանք իրականացնելու համար: Հոկտեմբերի 7-9-ը Հ. Մատիկյանը Վիեննայում մասնակցել է Կոմիտասագիտական միջազգային գիտաժողովին՝ ներկայացնելով **Composition Mechanisms of Lullabies in the Modern Musical Folklore of Shirak** զեկուցումը: 2024 թ. Հրատարակվել է **«Շիրակի տղաբերք և մանկատածություն»** վերնագրով մենագրությունը: Գիրքն ունի տարողունակ առաջաբան, եզրակացություն (հայերեն և անգլերեն լեզուներով), մանկական խոսվածքի բառարան, հավելված՝ շիրակյան օրորերգերի տեքստային և նոտագրված նմուշներով: Տպագրվել է **Օրորոցային երգերը Շիրակի ավանդական երաժշտության արդի դրսևորումներում** աշխատությունը՝ Հ. Հարությունյանի հետ համահեղինակությամբ: Գրքի հրատարակիչը ԱԻԿԱ-Արմենիա Ժամանակակից արվեստի ինստիտուտն է, որն ունի Web of Science, Book Citation Index: Տպագրվել է նաև մեթոդական ձեռնարկ՝ «**Մանկական բանահյուսության արդի կենցաղավարումը Շիրակում»** վերնագրով (Էլդորադո, 2024): Հաշվետու տարում խումբը մասնակցել է 1 միջազգային գիտաժողովի և հրատարակել 1 գիտական հոդված:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն **պ.գ.թ. Ա. Հայրապետյան**

գիտքարտուղար **պ.գ.թ. Ա. Ակոպով**

4. –

5. 2024 թ. հրապարակումների ցանկ

Մենագրություններ, ժողովածուներ

1. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ›› հոդվածների պարբերական ժողովածու, հտ. 1 (27), Գյումրի, ՇՀՀԿ հրատ., 2024, 224 էջ:
2. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ›› հոդվածների պարբերական ժողովածու, հտ. 2 (27), Գյումրի, ՇՀՀԿ հրատ., 2024, 230 էջ:
3. «Տայքը պատմության խաչուղիներում», հոդվածների ժողովածու, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., 2024, 286 էջ:
4. Նահատակյան Դ.Ս., Ակոպով Ա.Ա., Հայրապետյան Ա.Ս., Տայք. Պատմաճարտարապետական ուսումնասիրություն: Մաս Բ (Արսյացփոր): Գյումրի, ՇՀՀԿ հրատ., 2024, 208 էջ:
5. Մատիկյան Հ.Հ, Հարությունյան Հ.Գ., Օրորոցային երգերը Շիրակի ավանդական երաժշտության արդի դրսևորումներում, Ե., ԱԻԿԱ-Արմենիա, Ժամանակակից արվեստի ինստիտուտ հրատ., 2024, 189 էջ:
6. Հայ ավանդական երաժշտության խնդիրներ: Հոդվածների և նյութերի ժողովածու, Կազմ.՝ Հ.Հ. Հարությունյան, Ե., ԵԳԵԱ հրատ., 2024, 168 էջ:
7. Հարությունյան Հ.Հ., Համքարային ավանդույթը հայ աշուղական արվեստում, Ե., «ԵԳԵԱ» հրատ., 2024, 186 էջ:
8. «Հայագիտական ընթերցումներ», հոդվածների ժողովածու, մաս 1, Ազգագրություն-բանագիտություն, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., 2024, 143 էջ:
9. «Հայագիտական ընթերցումներ», հոդվածների ժողովածու, մաս 2, Երաժշտագիտություն, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., 2024, 226 էջ:
10. Մատիկյան Հ.Հ., Շիրակի տղաբերք և մանկատածություն, Գյումրի, Էլդորադո, 2024, 222 էջ:
11. Մանկական բանահյուսության արդի կենցաղավարումը Շիրակում: Մեթոդական ձեռնարկ, Կազմ.՝ **Մատիկյան Հ.Հ.,** Մելիքսեթյան Ա., Նիկողոսյան Շ., Թումասյան Գ., Գյումրի, Էլդորադո, 2024, 120 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Այվազյան Գ.Ս., Ալեքսանդրապոլի գրական կյանքի անծանոթ էջերը. Աղեքսանդր Ափրիկյան, Москва, "Интернаука": электронный научный журнал, № 42(359), 2024, с. 49-51.
2. Այվազյան Գ.Ս., Ալեքսանդրապոլի գրական կյանքի անծանոթ էջերը. Պետրոս Բեբուրյան, Москва, Инновационные подходы в современной науке, № 22 (178), 2024, с.171-182.

3. Այվազյան Գ.Ս., Մեր մասին. Մուշեղ Նարյան, Madrid, "XLIX International Multidisciplinary Conference “Prospects and Key Tendencies of Science in Contemporary World”, "Proceedings of the Conference (November, 2024)", 2024, pp. 22-25.
4. Ավագյան Ի.Է., Աշակերտների ներգրավումը Ալեքսանդրապոլում կազմակերպվող ծառատունկերին որպես կրթական գործընթացի բաղադրիչ, «Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և նրա դերը Կովկասի կրթական կյանքում» միջազգային գիտաժողով նվիրված՝ Ներսիսյան դպրոցի ստեղծման 200-ամյակին: Նյութերի ժողովածու: Ե., Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, 2024, էջ 233-241:
5. Ավետիսյան Հ.Գ., Բոբոխյան Ա.Ա., Գնունի Ա.Վ, **Մկրտչյան Լ.Ա.,** Սարգսյան Գ.Մ., Մշակութային այլափոխումների խնդիրն Արաքս գետի ձախափնյա շրջաներում մ.թ.ա. I հազ. երկրորդ քառորդում, Ե., Մեծամորյան ընթերցումներ, գիտական հոդվածների ժողովածու II, 2024, էջ 68-95:
6. Ավետիսյան Հ.Գ., Գնունի Ա.Վ., **Մկրտչյան Լ.Ա.,** Սարգսյան Գ.Մ., Ծիսապաշտամունքային համալիրները ոռոգման համակարգի համատեքստում, Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Ե., ԱԻԿԱ-Արմենիա, Ժամանակակից արվեստի ինստիտուտ հրատ., 2024, էջ 61-73:
7. Բազեյան Կ.Ռ., Իգական սեռի մասնագիտական կրթության դրվածքը հայոց մեջ 19-րդ դարի վերջին - 20-րդ դարասկզբին, Ներսիսյան դպրոցի ստեղծման 200-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, 2024, էջ 242-252:
8. Գալստյան Հ.Հ., Շիրակի ջրանցքի կառուցման նշանակությունը և դրա արտացոլումը բանահյուսության մեջ, «Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», (խմբ.՝ Բոբոխյան Ա.Ա., Հովսեփյան Ռ.Ա.), Ե., ԱԻԿԱ-Արմենիա, ժամանակակից արվեստի ինստիտուտ հրատ., 2024, էջ 248-260:
9. Հայրապետյան Ս., Գրախոսություն - «Լ.Մ. Խաչատրյան - «Հին հայերենի քերականական համակարգի տիպաբանությունը», Ե., «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի», հտ. 1 (68), 2024, էջ 262-268:
10. Հարությունյան Հ.Հ., Աշուղ Խայաթը և Ալեքսանդրապոլի աշուղական համքարությունը, Ե., Կոմիտաս թանգարան ինստիտուտի տարեգիրք, հ. 9, 2024, էջ 68-82:
11. Մկրտչյան Լ.Ա., Սարգսյան Գ.Մ., Միջնադարյան ամրոցների ջրահավաք պահեստարանները, «Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», (խմբ.՝ Բոբոխյան Ա.Ա., Հովսեփյան Ռ.Ա.), Ե., ԱԻԿԱ-Արմենիա, ժամանակակից արվեստի ինստիտուտ հրատ., 2024, էջ 153-165:
12. Պետրոսյան Ս.Գ., Խորենացիական Հայկակի և նրա հակառակորդի հավանական նախատիպերի շուրջ, Ե., «Վէմ» հանդես, 3 (87), 2024, էջ 34-56:
13. Սահակյան Կ.Ա. Հովհաննիսյան Ռ.Պ., Երազային պատկերի կառուցման խոսքային հյուսվածքը (1988 թ. երկրաշարժին Գյումրիում գրառված նյութերի հիման վրա), Ե., Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ. Միջազգային գիտաժողովի նյութեր, 2024, էջ 132-144:

14. Սահակյան Կ.Ա., Ժողովրդական մտածողությունը որպես էթնիկական վարքի կարգավորման հոգեբանական գործիք, Գյումրի, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», թիվ 1, պրակ Բ, 2024, էջ 89-98:
15. **Սահակյան Կ.Ա.,** Չափանյան Ա.Հ., «Մասնագիտական կողմնորոշման հոգեբանական առանձնահատկություններն ավագ դպրոցում», Գյումրի, ՇՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողովի նյութերի ժողովածու, 2024, էջ 203-210:
16. **Սահակյան Կ.Ա.,** Պապիկյան Վ.Մ. Թումասյան Կ.Լ., ՆԼԾ. մարդու վրա հոգեբանական ներգործության մեթոդներ, Գյումրի, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», թիվ 1, պրակ Բ, 2024, էջ 99-111:
17. Վարդանյան Բ.Վ., «Հնագիտություն» առարկայի դասավանդման խնդիրները մարզային բուհերում՝ Վանաձորի պետական համալսարանի օրինակով, Վանաձոր, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Հումանիտար և հասարակական գիտություններ, հտ. 1, 2024, էջ 162-171:
18. Авагян И.Э., Оганнисян А.Г., Оганнисян Г.А., О закрытии «дома терпимости» в городе Александрополе по архивным материалам в начале xx века, Десятые Всероссийские (с международным участием) историко-этнографические чтения, посвященные памяти профессора Магомедова Р.М., приуроченных к 50-летию кафедры Истории России и 60-летию исторического факультета Дагестанского государственного университета 13 октября 2023 г., Махачкала, 2023, с. 22-25.
19. **Айвазян Г.С.,** Российско-турецкие дружественные контакты на берегах реки Ахурян, Shawnee, Proceedings of the LXIII International Multidisciplinary Conference «Recent Scientific Investigation, 2024, p.22-25.
20. Базеян К.Р. Роль сельских мигрантов в процессе формирования городского населения города Гюмри, М., "Малые и средние города: история и современные проблемы. Этнографические очерки (К 100-летию М.Н. Шмелёвой)", Старый сад, 2024, с. 65-75.
21. Akopov A., Matikyan H., Hayrapetyan A. The Principality of Tayk in the context of the regional policy of the Byzantine Empire during the reign of Basil II. Ness Ziona, Israel, Proceedings in Archaeology and History of Ancient and Medieval Black Sea Region, N16, 2024, pp. 615-621.
22. Bazeyan K., Gender Stereotypes and their Overcoming through Education (Based on the Results of the Project Implemented in Armenia), Blagoevgrad, Bulgaria, Balkanistic Forum, Vol. 1/2024, pp.168-178.
23. Buzhilova A., Erlikh V., Fehren-Schmitz L., Gambashidze I., Kantorovich A. R., Kolesnichenko K. B., Lordkipanidze D., Magomedov R. G., Malek-Custodis K., Mariaschk D., Maslov V., Mkrtchyan L., Nagler A., Nashli H., Ochir M., Piotrovskiy Y., Saribekyan M., Sheremetev A., Stöllner Th., Judith Thomalsky, **Vardanyan B.,** Posth C., Krause J., War-

inner Ch., Hansen S., Haak W. The rise and transformation of Bronze Age pastoralists in the Caucasus, Nature, 30 October, 2024, pp 1-9.

24. Davtyan R., **Mkrtchyan L.,** Arnhold S., Erste archäologische Untersuchungen in Khanjyan (Armenien), Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft 156, 2024, 57-72.
25. Ghalichi, A., Reinhold, S., Rohrlach, A., Kalmykov A., Childebayeva A., He, Y., Aron F., Semerau L., Bastert-Lamprichs K., Belinskiy A., Berezina N., Berezin Y., Broomandkhoshbacht N., Buzhilova A., Erlikh V., Fehren-Schmitz L., Gambashidze I., Kantorovich A., Kolesnichenko K., Lordkipanidze D., Magomedov R., Malek-Custodis K., Mariaschk D., Maslov V., Mkrtchyan L., Nagler A., Nashli H., Ochir M., Piotrovskiy Y., Saribekyan M., Sheremetev A., Stöllner T., Thomalsky J., **Vardanyan B.,** Posth C., Krause J., Warinner C., Hansen S., Haak W., The rise and transformation of Bronze Age pastoralists in the Caucasus. *Nature* (2024).
26. Hayrapetyan A., Akopov A., Russian Peasants in Alexandropol District: Emergence, Organisation of Communal Life and Forms of Land Tenure (19th-early 20th century). Serbia, Novi Sad, ISTRAŽIVANJA: Journal of Historical researches. N 35, 2024, pp. 501-515.
27. **Vardanyan B**., Poghosyan A., Saribekyan M**.,** The Worship of Woman and the methods of her depiction in the Bronze and Iron Ages of Armenia, Mother Goddess: from Anahit to Mary, Yerevan, History Museum of Armenia, 2024, pp. 24-58.
28. Zarikian N., **Mkrtchyan L., Vardanyan B.,** Food Patterns in The Bronze-Iron Age Archaeological Site Lernakert in Armenia: Results of Archeozoological Research. History, Archeology and Ethnography of the Caucasus, Vol. 20. N. 1, 2024, pp. 90-102.

Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, 2024, հ. 1 (27), 224 էջ:

1. Ակոպով Ա.Ա., Հայրապետյան Ա.Ս., Տայքը 11-15-րդ դարերում (պատմական ակնարկ), էջ 31-41:
2. Բազեյան Կ.Ռ., Մասնագիտություն և զբաղմունք ցույց տվող բառերը Շիրակի բարբառային բառարաններում, էջ 183-195:
3. Բոյաջյան Ա.Գ., Ավետիսյան Գ., ՀՀ սոցիալ-ժողովրդագրական խնդիրները և ազգային ինքնապահպանության հարցերը, էջ 207-217:
4. Հարությունյան Հ.Հ., Մատիկյան Հ.Հ., Օրորոցային երգերի մի քանի ոճական առանձնահատկությունները Շիրակի արդի բանահյուսության մեջ, էջ 160-175:
5. Մատիկյան Հ.Հ., Բանաձևային մտածողությունը Շիրակի մանկական բանահյուսական տեքստերում, էջ 176-182:
6. Պետրոսյան Լ.Ս., Մի պարերգի տեքստի պատմական և ծիսական բաղադրիչների մասին, էջ 152-159:
7. Պետրոսյան Ս.Գ., «Լուլու» ցեղերի և Ուազա երկրի բնույթի շուրջ, էջ 18-30:

8. Խաչատրյան Գ.Կ., Հայրապետյան Ս.Ս, Փավստոս Բուզանդից մինչև այսօր (Դարձ-վածաբանական միավորների քննություն), էջ 63-77:

Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, 2024, h. 2 (27), 230 էջ:

1. Բոյաջյան Ա.Գ., Շիրակի մարզի բնակչության աղքատության մակարդակը և զարգացման միտումները XXդ. վերջին XXI սկզբին, էջ 196-208:
2. Հայրապետյան Ս.Ա., Գիտական լրատու, էջ 209-223:
3. Հարությունյան Հ.Հ., Մատիկյան Հ.Հ., Հեղինակային օրորների յուրահատուկ դրսևորումների մասին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2024, 2 (28), էջ 124-140:
4. Հովհաննիսյան Ռ.Պ., Սահակյան Կ.Ա. Գյումրու բանավոր ժառանգության վերլուծության փորձ (1983-93 թթ. գրառված բանահյուսական նյութերի հիման վրա), էջ 141-158:
5. **Matikyan H.,** Ghrejyan L., Elements of Beliefs and Cult in the Oaths of Shirak (Interdisciplinary Study), p. 159-172.

Հոդվածները հրատարակվել են «Տայքը պատմության խաչուղիներում» հոդվածների ժողովածուում, Գյումրի, 2024, 286 էջ:

1. Ադամյան Ս.Խ., **Նահատակյան Դ.Ս., Ակոպով Ա.Ա.**, Պատմական Տայք նահանգի Արսյացփոր գավառի նորահայտ վիմագրական նյութի վերլուծությունը, էջ 128-142:
2. Ալեքսանյան Կ.Վ., Թուրք-հայկական պատերազմի առաջին փուլը (1920թ. հունիս-հոկտեմբեր), էջ 174-191:
3. Ակոպով Ա.Ա, Նահատակյան Դ.Ս., Հայրապետյան Ա.Ս., Խոտորջուրի պատմաճարտարապետական հուշարձանների տեղագրության և արդի վիճակի շուրջ, էջ 102-113:
4. Ավագյան Ի.Է., Պատմական Տայքը ուրարտական սկզբնաղբյուրներում, էջ 22-32:
5. Բազեյան Կ.Ռ., Տայքի հայերի զբաղմունքների շուրջ, էջ 143-158:
6. Գրիգորյան Ա.Հ., Գրիգորյան Ա.Ա., **Նահատակյան Դ.Ս.,** Պատմական Տայքի Արսյացփոր և Ոքաղե գավառների ավանդական բնակելի տների և համալիրների ճարտարապետական առանձնահատկությունները և զուգահեռները, էջ 93-101:
7. Հովհաննիսյան Ռ.Պ., Սահակյան Կ.Ա. Շիրակյան ուտեստը՝ ավանդական կենցաղի կարևոր բաղկացուցիչ, էջ 256-271:
8. Մատիկյան Հ.Հ., Պատմական օրորը որպես վերարտադրվող ժանր (Տայքի և Շիրակի օրորների քննություն), էջ 205-211:
9. Մկրտչյան Լ.Ա., Արևմտյան Շիրակի ամրաշինական համակարգը II-I հազարամյակում. քարտեզագրում և թվայնացում, էջ 212-221:

10. Նահատակյան Դ.Ս., Ակոպով Ա.Ա., Բնակավայրաշինական հիմնական սկզբունքները Տայքում, էջ 114-127:
11. Պետրոսյան Ս.Գ., Դայաենի երկրի արքայանունների շուրջ, էջ 7-21:

Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Հայագիտական ընթերցումներ», հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., 2024, մաս 1, Ազգագրություն-բանագիտություն, 142 էջ:

1. Բազեյան Կ.Ռ., Լենինականի կանանց նոր մասնագիտությունները հանրային արտադրության մեջ 1920-1940-ական թթ., էջ 6-23:
2. Հարությունյան Հ.Հ., Լենինականի քաղաքային ժողովրդական երգը երաժշտագետ Հ. Ափինյանի գրառումներում, էջ 23-37:

Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Հայագիտական ընթերցումներ», հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., 2024, մաս 2, Երաժշտագիտություն, 170 էջ:

1. Ասատրյան Ա.Հ., Գեորգի Տիգրանովը Ա. Խաչատրյանի բալետներում հումանիստական գաղափարների արտահայտման մասին, էջ 156-164:
2. Հարությունյան Հ.Հ., Հայ միջնադարյան գուսանական արվեստի մի քանի բնորոշիչների շուրջ, էջ 73-89:
3. Մատիկյան Հ.Հ., Մոկսի հարսանեկան երգերի բնութագիրը Հովսեփ Օրբելու գրառումների համապատկերում, էջ 146-154:
4. Պետրոսյան Լ.Ս., «Երի, երի յանդըմ» ժողովրդական երգի սոցիալ-տնտեսական հենքի մասին, էջ 118-129:
5. Սահակյան Կ.Ա., Հովհաննիսյան Ռ.Պ., «Դատարկված բնի» համախտանիշ ունեցող ընտանիքներ (էթնոհոգեբանական ուսումնասիրություն), էջ 165-184:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ **պ.գ.թ. Ա. Հայրապետյան**

Գիտքարտուղար՝ **պ.գ.թ. Ա. Ակոպով**

6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Տնօրեն՝ պ. գ. թ., դոցենտ Ա.Ս. Հայրապետյան,
Գիտքարտուղար՝ պ. գ. թ. Ա.Ա. Ակոպով,
Էլեկտրոնային փոստ՝ info@shirakcenter.sci.am, hkentron@mail.ru,
Կայքէջեր՝ shirakcenter.sci.am, shiraksciworks.sci.am

7. --

8. —

9. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին

10. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ՝ նշելով համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրապարակումները

ՇՀՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԳԱԱ հայագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՃՇԱՀ-ի, ՎՊՀ-ի, ՇՊՀ-ի, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի, Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի և ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի հայագիտական ամբիոնների, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան հին ձեռագրերի ինստիտուտի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի, Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության թանգարան-ինստիտուտի, Հայոց ազգագրության, Հայաստանի պատմության ազգային, Շիրակի երկրագիտական և Գյումրու ժող. Ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարանների, ԳԱԹ-ի և այլ պետական ու հասարակական կազմակերպությունների հետ:

Համատեղողների թիվը՝ 5 (ՇՊՀ), 1 (ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ), 2 (ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ), 1 (ՀՊՄՀ), 1 (ՃՇՀԱՀ), 1 (ՊԱԹՊՄՊ ծառայություն), 1 («Կումայրի» արգելոց-թանգարան), 1 (ԳԱԱ ՀԱԻ):

2024 թ. եղել են 14 համատեղ հրապարակումներ. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ (10), ՎՊՀ (1), ՇՊՀ (1), ՑԹԻ (1), ՃՇՀԱՀ (1):

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ պ.գ.թ. Ա. Հայրապետյան

Գիտքարտուղար՝ պ.գ.թ. Ա. Ակոպով

Աղյուսակ 1

2024թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.)			
		Նպատակային ֆինանսավորում	Բազային ֆինանսավորում	Թեմատիկ ֆինանսավորում	Տնտ. Պայմանագրեր
1.	**2.**	**3.**	**4.**	**5.**	**6.**
1.	«ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ		1-36/23-1SRCAS **58760.4**	21T-2A292, 21T-6E197, 22YR-6B030 **16375.2**	

Աղյուսակ 2

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

N	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	Այդ թվում՝ արտ. երկրներից
1	**2**	**3**	**4**	**5**
1	«Երիտասարդ հնագետների միջազգային ամառային դպրոց» (12 մասնակից, 6-ը՝ արտերկրից)	Գյումրի-Ջրաձոր, 1-8 հուլիսի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	12	6
2	«Ազգագրական-բանագիտական ընթերցումներ», հանրապետական 4-րդ գիտաժողով նվիրված Լենինականի անվանակոչության 100-ամյակին	Գյումրի, 16 օգոստոսի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	14	
3	«Շիրակի ճարտարապետությունը հնագույն շրջանից մեր օրերը» ամառային դպրոց	Գյումրի, 15-21 հուլիսի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	18	
4	«Պատմական Տայքը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ)», միջազգային գիտաժողով	Գյումրի, 28-30 սեպտեմբերի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	30	4
5	«Ափինյանական ընթերցումներ. ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրները» հանրապետական չորրորդ գիտաժողով	Գյումրի, 30 նոյեմբերի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ	20	

Աղյուսակ 4

Աշխատակիցների արտասահման (այդ թվում՝ ԱՊՀ երկրներ) կատարած գործուղումներ

N	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների քանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	«Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	ՌԴ Թուրքիա ԱՄՆ Իտալիա, Ավստրիա	1 1 2	2 1	

Աղյուսակ 5

Կազմակերպությունում արտասահմանյան գիտնականների ընդունելությունը

N	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների քանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	«Շիրակի հայագի-տական հետազոտու-թյունների կենտրոն» ՊՈԱԿ	ՌԴ, Վրաստան, ԱՄՆ Հունաստան	4 2 1 1	 6 3	2 1

Աղյուսակ 6

Աղյուսակ 7

ԳԱԱ գիտաշխատողների 2024թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություններ, հոդվածների ժողովածուներ, գլուխ(ներ) գրքերում		Ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր		Հոդվածներ գրախոսվող ամսագրերում		Հոդվածներ գիտաժողովների նյութերի ժողովածուներում		Թեզիսներ	
		Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	«ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ	**11**	-	-	-	**42**	**10**	**4**	**3**	**47**	**11**

Աղյուսակ 8

Աղյուսակ 9

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2023թ.

N	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների թիվը	ԳԱԱ ակադեմի-կոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**
	«ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ	23	20			2	14

Աղյուսակ 10

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ պ.գ.թ. Ա. Հայրապետյան

Գիտքարտուղար՝ պ.գ.թ. Ա. Ակոպով